



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 43 - Ա
19 դեկտեմբերի 2013 թ.

**ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 -րդ և 1.11-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 1-ի N 308—Ն որոշման 1-ին կետը ու 3-րդ կետի 1-ին ենթակետը

կարգադրում եմ՝

1. Ստեղծել մարզպետարանի աշխատակազմի ոլորտային մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբ ըստ ոլորտների՝

- | | |
|----------------------|--|
| Հովհաննիսյան Վանիկ | - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ գյուղատնտեսություն և բնապահպանություն |
| Մելքոնյան Աշոտ | - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ առողջապահություն և սոցիալական ապահովություն |
| Բադալյան Գարիկ | - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ կրթություն, մշակույթ և սպորտ |
| Ասատրյան Իվան | - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում |
| Մուշեղյան Յուրա | - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ժ/պ՝ ֆինանսական |
| Մնացականյան Վարդուհի | - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ՝ բոլոր ոլորտների ամփոփում և վերլուծություն |
| Ստեփանյան Էդիկ | - մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ՝ հողաշինարարություն |

- Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ՝ քաղաքացիական հասարակություն
- Խաչատրյան Գևորգ - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ՝ ճանապարհաշինություն
- Բիծյան Հակոբջան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ՝ ջրամատակարարում, ջրահեռացում և գազամատակարարում
- Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ՝ քաղաքաշինություն

2. Աշխատանքային խմբին՝ մոնիտորինգի ու գնահատման կիսամյակային և տարեկան հաշվետվությունները կազմել յուրաքանչյուր տարվա տարեկան աշխատանքային պլանին և միջոցառումների ծրագրին համապատասխան և դրանք ներկայացնել մարզպետին:

3. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ